



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ**

**Ուսուցման տեխնոլոգիաներ**

**ԱՌԱՐԿԱ**

**Մայրենի**

**ՀԵՂԻՆԱԿ**

**Գայանե Մալխասյան**

**ՄԱՐԶ**

**Երևան**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գ. Մահարու անվան հ.176 հիմն. դպրոց**

## Բովանդակություն

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1 .....	4
Ուսուցման տեխնոլոգիաներ .....	4
ԳԼՈՒԽ 2. ....	5
Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա .....	5
ԳԼՈՒԽ 3 .....	7
Զարգացնող ուսուցման տեխնոլոգիա .....	7
ԳԼՈՒԽ 4 .....	9
Լիակատար (ամբողջական) յուրացման տեխնոլոգիա .....	9
ԳԼՈՒԽ 5 .....	11
Տարբեր մակարդակներով ուսուցման տեխնոլոգիա .....	11
ԳԼՈՒԽ 6 .....	13
Հարմարվողական (ադապտացիոն) ուսուցման տեխնոլոգիա .....	13
ԳԼՈՒԽ 7 .....	15
Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա .....	15
ԳԼՈՒԽ 8 .....	16
Հեռավար ուսուցման տեխնոլոգիա.....	16
Եզրակացություն .....	17
Օգտագործված գրականություն .....	18

## Ներածություն

Հետազոտական աշխատանքի հիմքում ընկած է մանկավարժական հետազոտության տեսական մեթոդների արդյունավետության ներկայացումը ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների գործնական կիրառմամբ «Մայրենի» առարկայի դասավանդման շրջանակներում:

Հետազոտության գործնական նշանակությունը բացահայտում է, որ դասապրոցեսում տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է թե՛ թեմայի, թե՛ աշակերտական ընդունակությունների բազմակողմանի բացահայտմանը:

Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները: Մանկավարժական արդի ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացվում ուսուցման արդյունավետ պայմաններ մշակելու և ուսումնական գործընթացը դրանցով ապահովելու խնդրին: Ուսուցման ժամանակակից տեսությունների հիմնական առանձնահատկություններից է դասավանդման գործընթացում տարբերակված մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը:

Ստորև ներկայացված է տեխնոլոգիաների հնարավորությունները ուսուցման գործընթացում, որոնք նպաստում են ակտիվ ուսուցման ձևերի ներմուծմանը դասապրոցեսում:

Աշխատանքում ներառված են.

- տեխնոլոգիաների հնարավորությունների դասակարգումը կրթական գործընթացում
- գնահատումը տեխնոլոգիաների կիրառելիության մակարդակը ժամանակակից ուսուցման գործընթացում
- մանկավարժական տեխնոլոգիաները և համակարգերը, որոնք ստեղծվել են մանկավարժական պատկերացումների հիմքի վրա
- սովորողների մեջ ձևավորել հիմնավորված դիտարկումներ անելու կարողություն:

Այս տեսանկյունից կարևոր է նորարարական և ավանդական մանկավարժական համակարգերի վերլուծության կարողության զարգացումը:

# ԳԼՈՒԽ 1

## Ուսուցման տեխնոլոգիաներ

### 1. Ուսուցման ավանդական (վերարտադրողական) տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիան հիմնված է գիտելիքի, կարողությունների և հմտությունների փոխանցման վրա: Սա ապահովում է սովորողների՝ կրթության բովանդակության յուրացումը, դրա որակի ստուգումը և գնահատումը վերարտադրության մակարդակով:

Սա հին ժամանակներից եկող տեխնոլոգիա է, որը դեռ շատ տարածված է այսօրվա դպրոցում, հատկապես միջնակարգ դպրոցում: Այս տեխնոլոգիայի էությունը հետևյալ գծապատկերն է՝ նոր նյութի ուսուցում - ամրապնդում - ստուգում - գնահատում: Այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է կրթական պարադիգման, համաձայն որի կարելի է որոշել սովորողի բավարար կեցությունը և գործունեությունն ապահովող անհրաժեշտ գիտելիքի ծավալը և փոխանցել սովորողին: Ուսուցման հիմնական մեթոդներն են բացատրությունը՝ համակցված իրազնական նյութերով: Սովորողների գործունեության առաջատար ձևերն են լսելը և մտապահելը, իսկ գլխավոր պահանջը և արդյունավետության չափանիշը սովորածի անսխալ վերարտադրությունն է:

Ավանդական տեխնոլոգիան սովորողին դիտում է իբրև վերարտադրողական բնույթի կատարող: Ուսուցչի գործողություններն են բացատրությունը, ցուցադրումը, սովորողի կատարածի գնահատումը և սխալների շտկումը:

Տարրական դասարանների ուսուցիչն իրականացնում է բազմաթիվ մասնագիտական գործառույթներ, սակայն դրանցից կարևորագույններից է մանկավարժական հաղորդակցումը:<sup>1</sup>

Այս տեխնոլոգիան ունի մի շարք կարևոր առավելություններ. սա ժամանակ է տնտեսում, օգնում է, որ սովորողներն արագ հասկանան ուսումնական բարդ նյութը, ապահովում է կրթական-դաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարումը, հնարավոր է դարձնում գիտելիքի հաղորդման նորանոր ձևերի որոնումը:

Մրանով հանդերձ՝ ավանդական տեխնոլոգիան ունի որոշակի թերություններ. ուսումնական գործընթացի անհատականացման և տարբերակման աննշան հնարավորություններ, սովորողների մտածողական որակների թերզարգացածություն:

<sup>1</sup> . [http://www.zangak.am/pdf/mankavarj-2012\(3-4\)](http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4))

## ԳԼՈՒԽ 2.

### Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության: Ձույգերով բանավոր խոսքի, սահունության զարգացումը հնարավորություն է տալի ամփոփել այն, ինչը կարդացվել կամ յուրացվել է: Աշակերտները հերթով իրենց զույգերի հետ կրկնում են յուրացրած նյութը:<sup>2</sup>

*Սոցիալական փոխկախվածության* տեսության երկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

*Ճանաչողական զարգացման* տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրուների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրուները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե *ինչ* սովորելու, այլ *ինչպես* սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքինները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկախվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով:

<sup>2</sup>. Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր

Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առաջընթացի ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝ դրական փոխկախվածություն.

- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթաց/ մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- գնահատում:

Ուսուցման գործընթացի բովանդակության և օրինաչափությունների, ուսուցման տարրեր տեսակների ուսումնասիրումը, մեթոդական առաջարկությունների և նոր ու առաջավոր մանկավարժական տեխնոլոգիաների մշակումը:<sup>3</sup>

---

<sup>3</sup>. Միսյան Ս., Բաբայան Ի., Աղուզումցյան Գ.: Բարձրագույն դպրոցի մանկավարժություն:

## ԳԼՈՒԽ 3

### Զարգացնող ուսուցման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիան առավել ընդունվածը և տարածվածն է: Այս տեխնոլոգիան կյանքի կոչողներից են Վիզոտսկին, Ջանկովը, Էլկոնինը, Դավիդովը և այլք: Զարգացնող ուսուցման գաղափարների կայացման հարցում նշանակալից է Վիզոտսկու և նրա երկերի դերը. Վիզոտսկուն է պատկանում մշակութային-պատմական տեսություն կիրառումը մարդու հոգեկանի զարգացման գործում:

Մինչև Վիզոտսկին, կարծում էին, թե երեխայի զարգացումը, հատկապես ինտելեկտի կամ մտավոր որակների զարգացումը պայմանավորված է ուսուցման և դաստիարակության գործոնով: Վիզոտսկին ապացուցեց, որ մանկավարժությունը պիտի հիմնվի երեխայի զարգացման ոչ թե անցած, այլ վաղվա՝ եկող օրվա վրա: Միայն այդ դեպքում նա կարող է ուսուցման գործընթացում կյանքի կոչել զարգացման այն գործընթացները, որոնք տվյալ պահին գտնվում են մոտալուտ զարգացման տարածքում: Մոտալուտ զարգացման տարածք՝ ասելով՝ Վիզոտսկին հասկանում էր, որ զարգացման որոշակի փուլում երեխան, մեծահասակի ղեկավարությամբ և առավել խելացի ընկերների հետ համագործակցելով, կարող է ուսումնական խնդիրներ լուծել:

Սակայն մինչև Ջանկովի ուսումնասիրությունները Վիզոտսկու գաղափարները պահանջարկ չունեին ուսուցման գործի դիդակտիկայում և պրակտիկայում: Ջանկովին հաջողվեց տարրական դպրոցում անցկացված մանկավարժական փորձի հիման վրա ապացուցել, որ կարելի է արագացնել դպրոցականների զարգացումը ուսուցման արդյունավետության բարձրացման շնորհիվ:

Այս գաղափարի իրականացման համար հարկ եղավ մշակելու դիդակտիկական մի շարք սկզբունքներ: Վճռորոշ դեր ստացավ բարդության կամ դժվարության ամենաբարձր աստիճան նախատեսող ուսուցումը, որը բնութագրվում է նրանով, որ հնարավորություն է տալիս երեխային բացելու իր հոգևոր պահեստային ուժերը, դրանց տալիս է ուղղություն և դրսևորվելու ազատություն: Եթե ուսումնական նյութը և դրա ուսուցման մեթոդներն այնպիսին են, որ դպրոցականի առջև խնդիր չի դրվում հաղթահարելու խոչընդոտները, ապա զարգացումը դանդաղում է:

Բարդ կամ դժվար ուսուցում նախատեսող սկզբունքը որոշում է կրթության բովանդակության ընտրությունը և կառուցվածքը: Ուսումնական նյութը դառնում է առավել ընդգրկուն և խորիմաստ, գլխավորը տեսական գիտելիքներն են, սակայն դրա հետ մեկտեղ սովորողների գործնական կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները չեն նսեմանում:

Լ. Վ. Ջանկովը հաստատում էր, որ ծրագրային նյութն ուսուցանելիս հարկ է արագորեն առաջ գնալ: Անցած նյութի բազմաթիվ, միօրինակ կրկնությունները ուսուցման տեմպը դանդաղեցնում են և վրիպումների պատճառ են դառնում կամ էլ ուսուցման բարձր մակարդակով կազմակերպումը դարձնում են անհնար:

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան ակտիվորեն մշակել են նաև Դ. Բ. Էլկոնինը, Վ. Վ. Դավիդովը և նրանց բազմաթիվ աշակերտները: Էլկոնինը, նկատի ունենալով

դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, հիմնեց ուսուցման համակարգված գործունեական մոտեցումը:

Ձարգացնող ուսուցման դիդակտիկական գաղափարներից մեկն էլ սովորողների ռեֆլեքսիաների խթանումն է ուսուցման տարբեր գործընթացներում: Ռեֆլեքսիա ասելով՝ մանկավարժները նկատի ունեն սովորողների գիտակցական և իմաստավորված վերաբերմունքը ուսումնական գործունեության ընթացքում դրսևորվող սեփական գործողությունների, միջոցների, եղանակների հանդեպ:

Քանի որ ռեֆլեքսիաների խթանման միջոցը սերտ կապի մեջ է ինքնահսկման և ինքնագնահատման հետ, ապա այս տեսակ ուսուցման մեջ սրանք ևս կարևոր դեր ունեն:

Ձարգացնող ուսուցման տեխնոլոգիան մեծ արձագանք է գտել ուսուցչության շրջանում: Սակայն այս տեխնոլոգիայի մի քանի դրույթներ վիճահարույց են: Կան երեխաներ, որոնք չեն հաղթահարում դասարանի աշխատանքային տեմպը: Այդ պատճառով էլ արագընթաց և բարդության բարձր մակարդակ նախատեսող ուսուցումը ոչ բոլոր սովորողներին է հասանելի:



## ԳԼՈՒԽ 4

### Լիակատար (ամբողջական) յուրացման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիայի հեղինակներն են ամերիկացի գիտնական-մանկավարժներ Ջ. Քերոլը և Բ. Բլումը: Ամենից հաճախ մանկավարժները և կրթության ոլորտի ներկայացուցիչները Բլումի տաքսոնոմիայի օգնությամբ կարողանում են օբյեկտիվորեն գնահատել՝ որքանով են իրենք արդյունավետ իրականացրել ուսումնական գործընթացը: Այս գործիքը նաև թույլ է տալիս դյուրին դարձնել անհատականացված ուսուցումը, իրականացնել ամփոփիչ և ձևավորող գնահատում, պլանավորել նախագծային ուսուցում և այլն:<sup>4</sup> Ռուսական մանկավարժության մեջ այս տեխնոլոգիայի հանգամանակից նկարագրությունը տալիս է Մ. Վ. Կլարինը: Այս տեխնոլոգիան տարբերվում է ավանդականից (դաս-դասարանային համակարգից) իր վերջնարդյունքով: Դաս-դասարանային համակարգի դեպքում բոլոր սովորողներին միևնույն ժամանակահատվածում կատարելու և յուրացնելու համար տրվում նյութի նույն բովանդակությունը և ծավալը: Ստացվում են բավական տարբեր և ոչ միանշանակ արդյունքներ: Սովորողների մի մասը լավ է յուրացնում նյութը, մյուսները՝ վատ, իսկ ոմանք էլ տեղեկության մի մասն ընդհանրապես չեն յուրացնում, այսինքն՝ գիտելիքների յուրացման աստիճանը տարբեր է:

Լիակատար յուրացման տեխնոլոգիան տալիս է բովանդակային նույն նյութը, դրա հետևանքով նույն կարողությունների և հմտությունների ձեռքբերումն է նախատեսում, սակայն յուրաքանչյուր դպրոցականի համար նախատեսում է անհատական ժամանակային փուլ, մեթոդներ, ձևեր, աշխատանքային պայմաններ:

Այս տեխնոլոգիայի բնորոշ գիծը ուսուցման պլանավորված արդյունքներն են: Դա լիակատար յուրացման չափանիշն է: Չափանիշը տրվում է ընդհանրացված, միավորված տեսքով՝ նպատակների աստիճանակարգի օգնությամբ, այսինքն՝ մանկավարժական նպատակների փոխկապակցված աստիճանավորման սկզբունքով, որոնք մշակված են մտածողական, զգայական և հոգեշարժողական ոլորտների համար:

Ուսուցիչը պարտավոր է սովորողներին հասցնել ուսումնական նյութի բովանդակության պլանավորված ցուցանիշները: Նա որոշում է նախատեսվող գործունեության նպատակները, որոշակի գործողությունները և գործառնությունները, որոնք պիտի իրականացնի սովորողը, որ հասնի չափանիշին: Ճանաչողական գործունեության նպատակները վերաբերում են՝

- գիտելիքին (սովորողը մտապահեց, վերարտադրեց, ճանաչեց)
- ընկալմանը (սովորողը բացատրում է, ցույց է տալիս, մեկնաբանում է)
- կիրառում (սովորողը կիրառում է սովորած նյութը որոշակի պայմաններում և նոր իրադրության մեջ)
  - ընդհանրացում և համակարգում (սովորողը ամբողջից առանձնացնում է մասերը, ձևավորում է նոր ամբողջություն)
  - գնահատում (սովորողը որոշում է ուսուցման օբյեկտի նշանակությունը և արժեքը):

<sup>4</sup> . <https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy>

Այս տեխնոլոգիայում ուսումնական նյութի նախապատրաստում ասելով պիտի հասկանալ ուսումնական նյութի ողջ բովանդակությունը բաժանվում է առանձին ուսումնական միավորների (տարբեր հեղինակների մոտ՝ կամ ուսումնական տարրերի, կամ բովանդակային միավորների, կամ փոքր բլոկների): Ուսումնական միավորները ավարտուն իմաստ ունեն(իմաստային ամբողջություն), ծավալով էլ ընդարձակ չեն՝ 3-6 դասանյութ: Ամեն մի միավորի յուրացումը ստուգվում է հատուկ թեստի (ստուգողական աշխատանք) միջոցով, որը գնահատվում է երկաստիճան համակարգով՝ ստուգված կամ չստուգված:

Ուսումնական ամեն մի միավորի համար մշակվում է կորեկցիոն-շտկոդական դիդակտիկ նյութ, որը չյուրացրածը և բացթողումները շտկելու համար նախատեսվում է: Այս լրացուցիչ նյութերը տարբերվում են նախապես տրվածներից, սրանք սովորողին ընտրության հնարավորություն են տալիս ընկալելու, իմաստավորելու և մտապահելու համար առավել անհատական միջոցներ և ձևեր: Ամբողջ թեմայի համար մշակվում է լիակատար յուրացման որոշակի չափանիշ:

Այսօրինակ աշխատանք կատարելու համար սովորողները նախօրոք պետք է որոշակի պատրաստականություն ունենան: Սովորողների կողմնորոշումը նպատակ ունի խթանելու դասարանի համատեղ աշխատանքը ուսուցչի հետ պայմանավորվածության համաձայն և բացատրել նման ուսուցման հիմնական սկզբունքները: Թեմայի (ենթաբաժնի, դասընթացի) յուրացման գնահատականը նշվում է ըստ չափանիշի կամ էտալոնի, որը նախօրոք տրամադրվել էր աշակերտներին:

Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր սովորողի ուսուցիչն անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս, տալիս է բացատրություններ, ինչպես նաև սատարում և խրախուսում է ամեն մեկին առանձին-առանձին: Դժվարանալու դեպքում սովորողին տրվում են այլընտրանքային միջոցներ դրանք հաղթահարելու համար:

Ուսուցչի գործունեությունն այս տեխնոլոգիայի շրջանակներում նախատեսում է հետևյալը՝

- ծանոթություն ուսումնական նպատակներին.
- ուսուցման ընդհանուր պլանի բացատրություն.
- նոր նյութի ներկայացում և շարադրում (կատարվում է ավանդական եղանակով).
- ընթացիկ ստուգման կազմակերպում.
- ընթացիկ արդյունքների գնահատում.
- կորեկցիոն-շտկոդական աշխատանք այն սովորողների հետ, ովքեր լիովին չեն յուրացրել նյութը.
- փոխօգնության փոքր խմբերի ձևավորում և կազմակերպում.
- օգնության ստացած սովորողների կրկնակի թեստավորում:

Նման ձևով աշխատելուց հետո թեստային առաջադրանքով ստուգվում և գնահատվում է ամեն մի աշակերտի կողմից ողջ դասընթացի յուրացումը:

## ԳԼՈՒԽ 5

### Տարբեր մակարդակներով ուսուցման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիան նախատեսում է մանկավարժական այնպիսի պայմանների ստեղծում, երբ ամեն մի սովորող ընդգրկվում է ուսումնական գործընթացի մեջ: Ընդ որում այդ գործունեությունը նրա տարիքին, կարողություններին, ինչպես նաև հետագա զարգացման գոտիներին մոտ և համապատասխան են: Այս տեխնոլոգիայի ի հայտ գալը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավանդական դաս-դասարանային համակարգը, որը կողմնորոշված է բոլոր սովորողների համար միասնական ծրագրերի և մեթոդների կիրառմամբ, չի ապահովում աշակերտներից յուրաքանչյուրի լիակատար զարգացումը: Ուսումնական գործընթացում ուսուցիչը գործ ունի տարբեր հետաքրքրություններ, հակվածություններ, խառնվածքի, մտածողության, հիշողության, զգայական ոլորտի առանձնահատկություններ ունեցող սովորողների հետ: Ավանդական դաս-դասարանային համակարգի պայմաններում սովորողների անձնային հատկությունները և տարբերությունները հաշվի չեն առնվում:

Տարբեր մակարդակներով ուսուցման տեխնոլոգիան նախատեսում է սովորողների մակարդակային տարբերակում. սովորողներին բաժանում են հոսքերի և խմբերի ըստ դյուրաշարժության աստիճանի: Այդ խմբերից յուրաքանչյուրը ծրագրային նյութի յուրացումն իրականացնում են կրթական տարբեր բնագավառներում՝ ելնելով պետական կրթական և այլընտրաքային կամ տարբերակային չափորոշիչների պահանջներից (հիմնական մակարդակը որոշվում է պետական չափորոշիչն համապատասխան, իսկ տարբերակայինը ստեղծագործական բնույթի է, բայց անպայման բխում է հիմնական չափորոշիցից):

Տարբերակված ուսուցման երեք տեսակ է կիրառվում.

1. ուսումնառության սկզբում անձի դինամիկական բնութագրումների և սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների նախնական ախտորոշման հիման վրա երեխաները բաժանվում են տարբեր դասարանների, որոնք աշխատում են տարբեր մակարդակ ապահովող ուսումնական ծրագրերով.
2. միջին օղակում կատարվում է տարբերակում դասարանի ներսում՝ կախված ճանաչողական հետաքրքրություններից. կամընտրական հիմունքներով ձևավորվում են առանձին առարկաների խորացված ուսուցման խմբեր.
3. հիմնական դպրոցում և բարձր դասարաններում տարբերակված ուսուցում ըստ մասնագիտական կողմնորոշման, որը կատարվում է հեգեթանական-դիդակտիկական ախտորոշման, փորձաքննության, ուսուցիչների և ծնողների ցուցումների, դպրոցականի ինքնաճանաչման և ինքնորոշման հիման վրա:

Տարբերակված մակարդակներով ուսուցումը նախատեսում է՝

- ճանաչողական մոտիվացիայի ստեղծում և սովորողների ճանաչողական գործունեության խթանում.

- յուրաքանչյուր սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի ազատական ընտրություն, որը պետք է ցածր չլինի պետական չափորոշից.
- սովորողների՝ տարբեր մակարդակներով ինքնուրույն ուսուցման կազմակերպում.
- ուսումնական բովանդակության հիմնական բաղադրիչի լիարժեք յուրացում.
- ուսումնական գործընթացի կազմակերպում տարբեր ձևերով՝ զույգերով (փոխգործում սկզբունքով), խմբային կամ կոլեկտիվ.
- ուսումնական նյութի յուրացման ընթացիկ ստուգում.
- ներածական և ամփոփիչ ստուգողական աշխատանք՝ ուսումնական նյութի յուրաքանչյուր միավորի յուրացումը ստուգելու համար (հիմնական դրույթները չյուրացրած սովորողների համար կազմակերպվում են շտկողական աշխատանքներ մինչև լիակատար յուրացումը).
- անհատական պլաններով նախապատրաստական ուսուցում այս կամ այն կրթական ոլորտի համար:

Այս տեխնոլոգիայի կիրառության դեպքում նախընտրելի է պարապմունքների այնպիսի ժամաքանակը, որի ընթացքում հնարավոր լինի յուրացնելու ուսումնական նյութի տվյալ միավորը:

Գործունեության հիմնական տեսակի իրականացման նախապատրաստական փուլը նախատեսում է նպատակային հրահանգների ստեղծում: Ապա անցկացվում է նախապատրաստական կամ ներածական ստուգում հետևյալ ձևերով՝ թեստ, թելադրություն, հիմնական բնորոշումների, կանոնների, օրենքների, քայլաշարերի բացատրություն: Աշխատանքը եզրափակվում է նկատված թերությունների և բացթողումների շտկումով: Սովորողների կողմնորոշումն ապահովելու համար նրանց հաղորդվում են ինչպես պարտադիր, այնպես էլ բարձրամակարդակ պահանջները, տնային առաջադրանքները և գնահատման չափանիշները:

Նոր գիտելիքների ձեռքբերման փուլում սովորողների տրամադրության տակ պիտի դնել հակիրճ, բայց նաև տարողունակ բացատրություններ, որոնք կապահովեն նրանցից մեծ մասի՝ ուսումնական նյութի ինքնուրույն մշակումները և յուրացումը: Սովորողների մնացած մասի համար ապահովվում է կրկնակի բացատրություն՝ կիրառելով լրացուցիչ դիդակտիկ նյութեր: Յուրաքանչյուր աշակերտ ուսումնական նյութի յուրացման չափով մասնակցում է քննարկումներին, պատասխանում է ընկերների հարցերին, սեփական հարցերն է առաջադրում: Այս աշխատանքը իրականացվում է ինչպես զույգերով, այնպես էլ խմբով: Գիտելիքների ամրապնդման փուլում իրականացվում են ուսումնական նյութի պարտադիր մասի յուրացման ինքնաստուգում և փոխադարձ ստուգում: Աշխատանքի վերջափանիշային կատարումը գնահատվում է նախ ուսուցչի կողմից, ապա առավել նշանակալի հաջողությունները ներկայացվում են մյուս սովորողներին:

Պարապմունքների արդյունքներն ամփոփելու համար անցկացվում է ստուգողական թեստավորում: Ինքնաստուգումից և փոխադարձ ստուգումից հետո սովորողը գնահատում է իր կատարած աշխատանքը դասի ընթացքում:

## ԳԼՈՒԽ 6

### Հարմարվողական (ադապտացիոն) ուսուցման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիան տարամակարդակ ուսուցման մի տեսակն է, որը նախատեսում է ուսումնական պարամետրների ճկուն կազմակերպում՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները: Այստեղ կենտրոնական դեմքը սովորողն է. շեշտադրվում են նրա գործունեությունը, նրա անձնային որակները: Հատուկ տեղ է հատկացվում սովորողների ուսումնական կարողությունների ձևավորմանը:

Հարմարվողական տեխնոլոգիայի կիրառման դեպքում ուսուցիչն աշխատում է ամբողջ դասարանի հետ (հաղորդում է նոր նյութը, բացատրում է, ցույց է տալիս, վարժեցնում է և այլն) և անհատապես (ղեկավարում է սովորողների անհատական աշխատանքը, հսկում և ստուգում է և այլն): Սովորողների գործունեությունը ծավալվում է ուսուցչի հետ, անհատապես, դարձյալ ուսուցչի հետ և ինքնուրույն՝ ուսուցչի ղեկավարությամբ: Հարմարվողական տեխնոլոգիայի պայմաններում ուսումը հիմնականում դառնում է ակտիվ ինքնուրույն գործունեություն. Դա պարտադիր և լրացուցիչ գրականության ընթերցումն է, զեկուցումներ պատրաստելու աշխատանքն է, տարբեր բարդության խնդիրների լուծումն է, լաբորատոր և գործնական աշխատանքներն են, անհատական աշխատանքն է ուսուցչի հետ, գիտելիքների ձեռքբերման հսկողությունն է և այլն: Հարմարվողական տեխնոլոգիան նախատեսում է ստուգման բոլոր տեսակները՝ ուսուցչի հսկողությունը, ինքնահսկողություն, սովորողների փոխադարձ հսկողություն, հսկողություն տեխնիկական միջոցներով և ոչ մեքենայական հսկող ծրագրերով և այլն: Հակառակ միայն մեկ ուղղությամբ ընթացող հետադարձ կապի (ուսուցիչ - աշակերտ), որը լավ չի իրականացնում ուսուցման գործառությունը, ներդրվում է բազմալիք հետադարձ կապեր (ուսուցիչ - աշակերտ, աշակերտ - ուսուցիչ, աշակերտ - աշակերտ, ուսուցիչ սովորողների կելեկտիվ, ածակերտ - սովորողների կոլեկտիվ), որը նախատեսում է փոխհարաբերությունների բացառապես այլ ձևեր: Այս տեխնոլոգիայի կիրառման դեպքում ուսուցման գործընթացը կարող է ներկայանալ երեք փուլով.

1. ուսումնական նոր նյութի բացատրություն (ուսուցիչը սովորեցնում է բոլոր աշակերտներին).
2. ուսուցչի առանձնահատուկ աշխատանքը սովորողների հետ ինքնուրույնաբար աշխատող դասարանի Ֆոնի վրա.
3. սովորողների ինքնուրույն աշխատանքը:

Հարմարվողական տեխնոլոգիայի կիրառության ընթացքում առաջնությունը տրվում է սովորողի ինքնուրույն աշխատանքին, հետևաբար ուսումնական նոր նյութի բացատրության փուլը կարճատև է և հագեցած: Հարկավոր է առանձնացնել այն նյութը, որը ուսուցիչը կկիրառի ֆրոնտալ ուսուցման ժամանակ, դրանք բաժանել ծավալուն միավորների, ուսումնական ողջ դասընթացի համար պլանավորել բոլոր սովորողների

ուսումնական պարապմունքները, որոշել և առանձնացնել անհրաժեշտ և նպատակահարմար իրազննական միջոցներ:

Երկրորդ փուլի նպատակը սովորողներին ինքնուրույն աշխատանքի վարժեցնելն է՝ գիտելիքի, տեղեկատվության որոնում, պրոբլեմային խնդիրների լուծում, ստեղծագործական գործունեության խթանում: Ուսուցիչը նախապես ձևավորում է անհրաժեշտ հուզական մթնոլորտ, որը անհատական աշխատանքի կազմակերպման հիմքն է. նա աշակերտներին նախապատրաստում է ինքնուրույն աշխատանքի: Դասարանն աշխատում է ինքնուրույնաբար, իսկ ուսուցիչը նախօրոք կազմված գրաֆիկին հաապատասխան պարապում է առանձին աշակերտների հետ երեք մակարդակով ձևավորված առաջադրանքներով՝ վերարտադրողական, մասամբ որոնողական և ստեղծագործական բնույթի: Սովորողների ինքնուրույն աշխատանքը, որը նախատեսում է աշակերտ-աշակերտ, աշակերտ-աշակերտների խումբ հարաբերությունները, իրականանում է զույգերով աշխատող խմբերով (հաստատուն, դինամիկ, փոփոխվող):

Հաստատուն զույգը ըստ ցանկության միավորում է երկու աշակերտի, որոնք աշխատում են ուսուցիչ-աշակերտ դերերի փոփոխությամբ: Սա ապահովում է միմյանց հետ մշտական հաղորդակցումը: Զույգերով հաղորդակցման դեպքում ակտիվանում է սոցիալիզացիայի մտածական և խոսքային գործունեությունը. ամեն մեկը հնարավորություն ունի հարցեր տալու և պատասխանելու դրանց, բացատրելու, ապացուցելու, հուշելու, ստուգելու, գնահատելու, տեղում ուղղելու սխալները: Հաստատուն խմբերում կարող են աշխատել երկու ուժեղ և երկու թույլ աշակերտներ՝ ուժեղ-թույլ հարաբերակցությամբ:

Դինամիկ խմբերը ձևավորվում են միկրոխմբի շրջանակներում, որի մեջ մտնում են ավելի քան երկու աշակերտ: միկրոխմբին տրվում է մեկ ընդհանուր առաջադրանք, որը բաժանված է մի քանի մասերի՝ ամեն աշակերտի համար համապատասխան չափաբաժնով: Իրեն բաժին ընկած առաջադրանքը կատարելուց և ուսուցչի ստուգումից կամ ինքնաստուգումից հետո աշակերտն իր առաջադրանքն առանձին-առանձին քննարկում է միկրոխմբի անդամներից յուրաքանչյուրի հետ: Ընդ որում ամեն անգամ նա պետք է փոփոխի շարադրանքի տրամաբանությունը, շեշտադրումները, խոսքի ընթացքը, այսինքն՝ հարմարվելով դասընկերներից յուրաքանչյուրի անհատական առանձնահատկություններին:

## ԳԼՈՒԽ 7

### Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա

Մա ուսուցչի ղեկավարությամբ սովորողների հետազոտական- ինքնուրույն աշխատանքն է: Այսօրինակ գործունեության ընթացքում մշակվում և ամրապնդվում են սովորողների նոր գիտելիքները, կարողությունները և հմտությունները, զարգանում են ճանաչողական ակտիվությունը, հետաքրքրությունները, ստեղծագործական մտածողությունը և անձնային այլ որակներ: Ուսուցման ինտերակտիվ մեթոդները կիրառելիս փոխվում է նաև փոխգործակցությունը ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է գիջում սովորողների ակտիվությանը, մանկավարժի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար:<sup>5</sup>

Պրոբլեմային ուսուցման կիրառման դեպքում ուսուցիչը սովորողին ոչ թե պատրաստի գիտելիք է տալիս, այլ ներկայացնում է այն խնդիրը կամ հարցը, որը պիտի լուծում գտնի: Նա, սովորողին որոշակի հիմնախնդիր առաջարկելով հանդերձ, ձգտում է հետաքրքրել նրան, տվյալ խնդիրը լուծելու նախանձախնդրություն է արթնացնում:

Պրոբլեմային ուսուցման հիմնաքարը որոշակի իրավիճակի ստեղծումն է: Այստեղ շատ կարևոր է, որ լուծման համար ներկայացվող առաջադրանքը համապատասխանի սովորողների մտավոր կարողություններին, նրանց ունեցած գիտելիքներին, այլապես աշխատանքը կարող է տապալվել:

---

<sup>5</sup>. Ամիրջանյան Յ., Ա. Ս Սահակյան - Մանկավարժության

## ԳԼՈՒԽ 8

### Հեռավար ուսուցման տեխնոլոգիա

Հեռավար ուսուցման տեխնոլոգիայի դեպքում մարդը կրթություն է ստանում առանց ուսումնական հաստատություն հաճախելու: Սովորողն ուսանում է ժամանակակից հեռահաղորդակցական համակարգերի միջոցով՝ էլեկտրոնային փոստ, հեռուստատեսություն և համացանց: Այս տեխնոլոգիան սովորելու հնարավորություն է տալիս բոլոր նրանց, ովքեր հնարավորություն չունեն առկա ուսումնառության համար: Ուսուցման այս ձևը հարմար է կիրառել բուհական կրթության, ինչպես նաև որակավորման բարձրացման կամ վերաորակավորում ստանալու համար: Սովորելու հնարավորություն են ձեռք բերում հաշմանդամ մարդիկ:

Ստանալով ուսումնական նյութը էլեկտրոնային կամ տպագիր ձևով՝ սովորողն ինքնուրույն ուսումնասիրում է նյութը, ստանում է գիտելիք իր տանը, աշխատավայրում կամ համակարգչային հատուկ սրահում: Հեռավար ուսուցման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս հաշվի առնելու սովորողների անհատական կարողությունները, պահանջները, արագությունը, զբաղվածության աստիճանը: Նա կարող է ուսումնական նյութը յուրացնել ցանկացած արագությամբ՝ դանդաղ կամ էլ արագ: Մա այս տեխնոլոգիայի առավելությունն է:

Այս տեխնոլոգիան կիրառում է ուսուցման ավանդական եղանակները՝ դասախոսություն, խորհրդատվություն, լաբորատոր աշխատանք, ստուգողական աշխատանքներ, ստուգարքներ և այլն: Մակայն դրանք ունեն տարբերիչ առանձնահատկություններ: Դասախոսությունը բացառում է ակտիվ հաղորդակցումը դասախոսի հետ: Դասախոսության գրանցման համար կիրառվում են դիսկետները: Գերժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունն ուսումնական նյութը դարձնում են արտահայտիչ և դիդակտիկ: Դասախոսության ստեղծման համար գործածվում են կինեմատոգրաֆիայի բոլոր հնարավորությունները՝ դիպաշար (սցենար), դերասանական խաղ և այլն: Այսպիսի դասախոսություններ կարելի է լսել ցանկացած ժամանակ և ցանկացած հեռավորությունից: Բացի դրանից՝ ուսումնական նյութը կոնսպեկտավորելու կարիք չկա:

Խորհրդատվությունները հեռավար ուսուցման գլխավոր ձևերն են, որոնց միջոցով սովորողը ստանում է օգնություն ինքնուրույն ուսումնառության գործընթացում: Խորհրդատվությունը դասավանդողին հնարավորություն է տալիս գնահատելու ուսանողի անհատական որակները՝ ինտելեկտը, ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը: Լաբորատոր աշխատանքները նյութի գործնական յուրացման համար են նախատեսված: Ավանդական ուսուցման գործընթացում լաբորատոր աշխատանքների համար անհրաժեշտ են հատուկ սարքավորումներ՝ մակետներ, զանազան գործիքներ, քիմիական նյութեր և այլն: Վիրտուալ իրականացումը կցուցադրի այնպիսի երևույթներ, որոնք իրական կյանքում շատ դժվար կամ էլ հնարավոր չէ տեսանելի դարձնել: Ժամանակակից տեխնիկայի հնարավորությունները գործադրելու դեպքում կարելի է ստուգել նյութի յուրացման տեսական և գործնական համամասնությունը:



# Եզրակացություն

Ժամանակակից կրթական տեխնոլոգիաները դիտարկելիս համոզվում ենք, որ ուսուցման տեխնոլոգիաները կոնկրետ մանկավարժական համակարգի նախագիծ են, որոնք գործնականում իրականացվում են:

Թեպետ այս պահին դեռևս գործում է ավանդական մանկավարժական համակարգ՝ առանց ախտորոշիչ նպատակների և օբյեկտիվ վերահսկողության ավանդական ուսուցման կառավարման համակարգով: Ավելի խոստումնալից մանկավարժական համակարգին անցնելու համար, օրինակ, ուսուցման կառավարման «փոքր խմբերի» տիպով անհրաժեշտ է հատուկ.

1. ուսուցման տեխնոլոգիաների նախագծում
2. կատարելագործում տարբեր մակարդակներով ուսուցման մեջ,
3. նպատակ-արդյունք ինքնուրույն ուսումնառության գործընթացում:

Մանկավարժական համակարգի արդիականացումը հնարավոր է միայն մանկավարժական մեթոդիկայի գիտականորեն հիմնավորված կատարելագործման միջոցով, որը ներառում է խիստ գիտատեխնիկական առաջընթացի ձևավորում և ճշգրիտ վերարտադրություն՝ երաշխավորելով մանկավարժական գործընթացների հաջողությունը:

Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս սովորողներին վելուծել, վերաբերմունք ձևավորել, նյութի մասին ենթադրություններ անել, զարգացնել կարողություն օժանդակող միջոցների կիրառման հմտությունները: Սովորողների համար կռահումների որոշակի համակարգ է ապահովվում: Ընդլայնվում են նրանց ինքնահարցման, ինքնավերլուծության կարողությունները: Զարգանում են իմացածը դասակարգելու և նոր տեղեկատվության օգտագործման և ավելի խորքային, մտածված ու ընդարձակ պատասխաններ ձևավորելու հմտությունները:

## Օգտագործված գրականություն

1. Միսյան Ս., Բաբայան Ի., Աղուզումցյան Գ.: Բարձրագույն դպրոցի մանկավարժություն, Երևան, 2015
2. Ամիրջանյան Յ., Սահակյան Ա., Մանկավարժության (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005թ.
3. Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր: Երևան, Անտարես, 2008.
4. [http://www.zangak.am/pdf/mankavarj-2012\(3-4\)](http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4))
5. <https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy>